

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արարատի համայնքապետարանը 2022թ. նոյեմբերի 21-ին ժամը 11:00-ին հայտարարում է Արարատ համայնքի վարչական տարածքի գյուղ Արարատ բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության խոտհարկի 1.1695 հա /ծածկագիր 03-015-0399-0038/ աճուրդ վաճառք:

Հողատարածքի օտարման մեկնարկային գին է սահմանվել 200.000 ՀՀ դրամ 1 հա-ի համար, նախավճար՝ մեկնարկային գնի 50%-ի չափով, մասնակցության վճար՝ 5000 ՀՀ դրամ, աճուրդային քայլի չափը՝ մեկնարկային գնի 5%-ի չափով:

Աճուրդին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հայտ, մասնակցության վճարի անդորրագիր և անձնագրի պատճեն: Աճուրդի պայմաններին ծանոթանալու և լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Արարատի համայնքապետարան Արարատի մարզ, Արարատ համայնք ք. Արարատ, Շահումյան փ. 34: Հայտերի ընդունումը դադարեցվում է մրցույթի անցկացման օրվանից 3 /երեք/ աշխատանքային օր առաջ:

Արարատի համայնքապետարան /հեռ. 060 88 55 55/

